ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

—

H. Hubschmann. Die altarmenischen Ortsnamen, mit Beitragen zur historischen Topographie armeniens und enier karte. *1904* Strassburg (*գինն է 8 մարկ*)։

Հ. Հիւբշմանը խիստ մանրամասն կերպով նկարագրում է մեզ հայաբնակ տեղերի պատմութիւնը, մատնանիշ անելով, որ ներկայ հայ ազգաբնակութիւնը այդ տեղերում առաւել ուշ է երևան գալիս, քան ուրիշ ազգերը, որոնց գոյութիւնը ապացուցանում է ասորական աղբիւրներով և ասորական թագաւորների արքայական արձանագրութիւններով։

Այս ցեղերի գոյութեամբ բացատրւում են տեղերի շատ անուններ, որոնց կարելի չէ բացատրել հայ լեզուի հիման վերայ։

Հ. Հիւբշմանը մանրամասն քննութեան է ենթարկում նախահայկական անունները բացայայտելով միայն նոցա գոյութիւնը։ Հիւբշմանը, նախքան զուտ հայկական անունների բառական վերլուծումը՝ մանրամասն թւում է՝ գաւառները, գաւառական շրջանները, և այս ամենը գրքին կցուած մանրամասն քարտէսի հետ միասին մեծ արժէք են տալիս Հիւբշմանի գործին։

Պ. Հիւբշմանը մատնանիշ է անում զուտ հայկական անուններ կազմող բաղադրիչ մասերի վերայ։—Գրքի վերջում հեղինակը առաջ է բերում այն բոլոր անունների այբբենական ցանկը, որոնք արդէն բացատրուած են և որոնք դեռ կարօտ են գիտնական հետազօտութեան։

Պ. Հիւբշմանի գործը աչքի է ընկնում իւր ճշտութեամբ և զգոյշ հետազօտութեամբ և իւր ընդարձակ տեղեկութիւններով գիրքը դարձնում են վերին աստիճանի անհրաժեշտ ամեն մի հայկաբանի համար։

Մ. ԹԱՄԱՄՇԵԱՆ

1905 Պարիզ.